

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սույն ուղեցույցի հիմնական նպատակն է աջակցել քաղաքացիներին կենսաթոշակ նշանակելու և ստանալու հարցում: Ուղեցույցի ծավալները թույլ չեն տալիս անդրադառնալ օրենսդրությամբ կարգավորվող բոլոր խնդիրներին: Մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության համապատասխան տարածքային բաժիններ, ինչպես նաև «ԹԵԺ ԳԻԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» հետևյալ հեռախոսահամարներով՝ 080-080-353 և 080-080-343: Կարող եք այցելել նաև ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության ինտերնետային կայք՝ www.sif.am

1. Կենսաթոշակի տեսակները

Օրենքը սահմանում է կենսաթոշակի հիմնական երկու տեսակ՝ *ապահովագրական և սոցիալական*: Ապահովագրականը այն անձանց համար է, ովքեր ունեն պահանջվող աշխատանքային ստաժ: Տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ է առնվազն 5 տարվա ստաժ, իսկ հաշմանդամության և կերակրողին կորցնողի դեպքում՝ ըստ տարիքի՝ 2-ից 5 տարվա ստաժ: Սոցիալական կենսաթոշակը այն անձանց համար է, ովքեր չունեն պահանջվող ստաժը:

2. Կենսաթոշակի տարիքը

Ապահովագրական տարիքային կենսաթոշակի տարիքը սահմանված է 63 տարին (սակայն մինչև 63 տարին լրանալը կանանց համար սահմանված է տարիքային սանդղակ. 2008թ. համար կանանց թոշակ նշանակելու տարիքը սահմանված է 61,5 տարին):

3. Ի ձև է պարտավոր անել անձը պետական կենսաթոշակ ստանալու համար

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակների նշանակման և վճարման հարցերը կարգավորվում են 2003թ. ապրիլի 10-ից ուժի մեջ մտած «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով:

Պետական կենսաթոշակ նշանակելու համար անձն իր գրավոր դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը պարտավոր է ներկայացնել իր հաշվառման վայրում գտնվող Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության պետական ծառայության ստորաբաժանում (կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում):

Հայաստանի Հանրապետության տարածքում հաշվառում չունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացին իրեն կենսաթոշակ նշանակելու համար դիմում է իր փաստացի բնակության վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում:

Անչափահաս կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձի կենսաթոշակ նշանակելու համար նրա հաշվառման վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում գրավոր դիմում է ներկայացնում նրա օրինական ներկայացուցիչը՝ ծնողը, որդեգրողը, խնամակալը կամ հոգաբարձուն:

16 տարեկան անձն իրավունք ունի կենսաթոշակի համար դիմել անձամբ:

4. Կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերը

Տարիքային կենսաթոշակ նշանակելու համար քաղաքացին դիմումի հետ միասին ներկայացնում է՝

- 1) անձնագիրը, սոցիալական ապահովության քարտն ու դրանց պատճենները,
- 2) ապահովագրական ստաժը հաստատող փաստաթուղթը (աշխատանքային գրքույկը և դրա պատճենը, անհրաժեշտության դեպքում՝ ստաժը հաստատող այլ փաստաթղթեր կամ արխիվային տեղեկանքներ),
- 3) սոցիալական ապահովագրության վճարումների կատարված լինելու մասին պարտադիր սոցիալական ապահովագրություն իրականացնող լիազոր մարմնի կողմից տրված տեղեկանքը (կամ այդ փաստը հավաստող այլ փաստաթուղթ) կամ գործատուի տված տեղեկանքն աշխատավարձի չափի մասին՝ ըստ տարիների և ամիսների, 1992թ. հունվարից սկսած՝ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումներ կատարելու կամ աշխատավարձ ստացած լինելու վերաբերյալ տեղեկանքներ,
- 4) լուսանկար (4 x 6 սմ չափի):

5. Կենսաթոշակի նշանակման ժամկետները

Կենսաթոշակը նշանակվում է դիմելու օրվանից: Հաշմանդամության թոշակը նշանակվում է հաշմանդամ ճանաչվելու օրվանից, եթե դիմումը ստացվել է եռամսյա ժամկետում: Կերակրողին կորցնելու դեպքում՝ կերակրողի մահվան օրվանից, եթե դիմումը տրվել է վեցամսյա ժամկետում:

6. Որո՞նք են կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման պարտականությունները կենսաթոշակի նշանակման, վերահաշվարկման կամ կենսաթոշակի տեսակի փոփոխման ընթացակարգում

Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման համապատասխան աշխատակիցը պարտավոր է՝

- ա) դիմումում լրացված տվյալները համեմատել անձնագրի և ներկայացված մյուս փաստաթղթերի տվյալների հետ,
- բ) փաստաթղթերի բնօրինակները համեմատել դրանց պատճենների հետ, արձանագրել անհամապատասխանությունները և տարբերությունները, անհրաժեշտության դեպքում՝ օրենքով սահմանված կարգով ստուգել դրանց հավաստիությունը,
- գ) հաշվառել անձի դիմումը և տալ ստացական, որտեղ պետք է պարտադիր ձևով նշված լինի դիմումն ընդունելու օրը, ամիսը, տարեթիվը, իսկ անհրաժեշտ ոչ բոլոր փաստաթղթերը ներկայացնելու դեպքում՝ լրացուցիչ պահանջվող փաստաթղթերի ցանկը և դրանք ներկայացնելու ժամկետը,
- դ) լրացուցիչ փաստաթուղթ ներկայացվելու դեպքում՝ փաստաթղթի և դիմողին նախկինում տրված ստացականի վրա, առանց դրանց տեքստերը վնասելու, նշել ստանալու օրը, ամիսը, տարեթիվը և ստորագրել:

7. Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման որոշումները

Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումն անձի դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո, 7 աշխատանքային օրվա ընթացքում, դրանք քննարկում է և որոշում՝

ա) կենսաթոշակ նշանակել (վերահաշվարկել) կամ նշանակելը (վերահաշվարկելը) մերժել, կամ կենսաթոշակի տեսակը փոխել, կամ կենսաթոշակի տեսակը փոխելը մերժել,

բ) կենսաթոշակ վճարելը դադարեցնել կամ կասեցնել, կամ վերսկսել օրենքով սահմանված դեպքերում,

գ) ստուգել ներկայացված փաստաթղթերի հավաստիությունը:

Վերոհիշյալ դեպքերի մասին որոշումներից ցանկացածը ձևակերպվում է համապատասխան կարգադրությամբ և կարվում կենսաթոշակի գործին:

Կենսաթոշակ վճարելը դադարեցնելու մասին կարգադրության պատճենը 5 աշխատանքային օրվա ընթացքում անձին առաքվում է փոստով կամ տրվում անձամբ:

8. Հաշմանդամության կենսաթոշակի նշանակումը

Կենսաթոշակ նշանակելու համար հաշմանդամ ճանաչվելուց հետո 3-ամսյա ժամկետում կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում դիմելու դեպքում կենսաթոշակը նշանակվում է հաշմանդամ ճանաչվելու օրվանից:

Հաշմանդամության կենսաթոշակը նշանակվում է բժշկասոցիալական փորձաքննությունն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից ստացված՝ անձի հաշմանդամությունը հավաստող տեղեկանքի հիման վրա, որի «Փորձաքննություններ» տողում նշված առաջին ամսաթիվը համարվում է հաշմանդամություն սահմանելու օրը:

Հաշմանդամության կենսաթոշակը, հաշմանդամության խմբի փոփոխման դեպքում, վերահաշվարկվում է առանց կենսաթոշակառուի գրավոր դիմումի, բժշկասոցիալական փորձաքննությունն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից ստացված՝ անձի հաշմանդամությունը հավաստող տեղեկանքի հիման վրա:

9. Ո՞վքեր ունեն կերակրողին կորցնողի դեպքում կենսաթոշակի իրավունք

Կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունեն մինչև 18 տարեկան երեխաները, իսկ ուսումնական հաստատություններում առկա ուսուցմամբ սովորողները՝ մինչև 23 տարին լրանալը, սովորելու վերաբերյալ համապատասխան տեղեկանք ներկայացնելու դեպքում:

10. Ի՞նչ կենսաթոշակ կարող է ստանալ անձը, եթե չունի աշխատանքային (ապահովագրական) ստաժ

Այն անձինք, ովքեր չունեն աշխատանքային (ապահովագրական) ստաժ, իրավունք ունեն ստանալ ծերության սոցիալական կենսաթոշակ: Այդ կենսաթոշակը նշանակվում է անձի 65 տարին լրանալու դեպքում՝ հիմնական կենսաթոշակի չափով (որը 2008թ. հունվարի 1-ից սահմանվում է 6800 դրամ):

11. Ի՞նչպես է հաշվարկվում ապահովագրական կենսաթոշակը

Համաձայն օրենքի՝ կենսաթոշակը հաշվարկվում է հետևյալ բանաձևի միջոցով.

$$\text{Կենսաթոշակ} = Z + (n \times U) \times Q$$

Z-ն հիմնական կենսաթոշակի չափն է, որը 2008թ. հունվարի 1-ից սահմանվել է 6800 դրամ,

n-ը անձի ստաժի տարիների թիվն է,

U-ն ստաժի մեկ տարվա արժեքն է, որը 2008թ. հունվարի 1-ից կազմում է 395 դրամ,

Q-ն անձնական գործակիցն է, որը հաշվարկվում է ստաժի տարիների և պահանջվող ստաժի 25 տարվա հարաբերակցությամբ, ընդ որում, 25 տարին գերազանցող ստաժի յուրաքանչյուր մեկ տարվա համար գործակիցը սահմանվում է 0,02: Ելնելով վերոգրյալից՝ գերազանցելու դեպքում $Q = 1 + (n - 25) \times 0,02$

Օրինակ՝ 40 տարվա դեպքում $Q = 1 + (40 - 25) \times 0,02 = 1 + 15 \times 0,02 = 1 + 0,3 = 1,3$

12. Կենսաթոշակի վերահաշվարկման և կենսաթոշակի տեսակի փոփոխման համար դիմելը

Կենսաթոշակը վերահաշվարկելու կամ կենսաթոշակի տեսակը փոխելու համար դիմումը տրվում է այն կենսաթոշակ նշանակող ստորաբաժանմանը, որտեղ գտնվում է կենսաթոշակի գործը:

Եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերն ստացվում են փոստով, ապա ստացականը դիմումատուին առաքվում է նույն կարգով կամ տրվում անձամբ նրան:

Դիմումը գրանցվում է դիմումների հաշվառման մատյանում:

13. Կենսաթոշակառուի վճարում

Կենսաթոշակը վճարվում է անձամբ կենսաթոշակառուին: Կենսաթոշակառուն իրավունք ունի կենսաթոշակ ստանալ վճարման ծառայություն մատուցող կազմակերպությունից (2008թ. հունվարի 1-ի դրությամբ այդ կազմակերպություններն են Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի վճարման ծառայության տարածքային ստորաբաժանումները, «Հայփոստ» ՓԲԸ-ն և «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ն (նախկին «Հայինայբանկ»)):

14. Կենսաթոշակառուի պարտականությունները

Կենսաթոշակառուն պարտավոր է կենսաթոշակ նշանակող պետական մարմնին տեղյակ պահել այն հանգամանքների մասին, որոնց առկայությունը հանգեցնում է կենսաթոշակի չափի փոփոխության կամ դրա վճարման դադարեցման (ընտանիքի կազմի փոփոխություն, աշխատելու հանգամանք և այլն):